

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՔ

ՆԱՅԻՐԵԱՆ ԴԱԼԱՐ ԲԱՐԴԻ

Նազում ես ու շորորում զմրուխտէ քո շորերում,  
Շուք արած ճամբի վրայ մանկութեան կանաչ արտի,  
Քո կանչը զնզում է զիլ իմ սրտի խոր ձորերում,  
Դու հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

Ս:խ, ասես խարոյկ լինես բռնկուած կանաչ բոցով,  
Ես հեռուից քեզ եմ գգւում կարօտով կրակ սրտի,  
Լցնում ես դաշտերն ամէն հարազատ քո խշշոցով,  
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

Իմ արտոյտ մանուկն ահա խաղում է քո շուաքում,  
Քո փառքին երգ է շրջում շրթերով կոկոն վարդի.  
Ջով արա նրա կեանքին, հօր նման գգուիւր անքուն,  
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց գատ,  
Քեզ նման կանաչ կեանքով քեզ համար ելած մարտի,  
Կը մեռնեմ, միայն թէ դու դարերում ազատ խշշաս,  
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

\* \* \*

Կ Ա Կ Ա Չ

Իրար հազիւ ճանաչելով,  
Հեռուից - հեռու հառաչելով  
Հայոց սարերն իրար ասին.  
— Ե՞րբ կը ծաղկենք մենք միասին:  
Իրար ասին  
Ու Նայեցին աչքերով թաց՝  
Վարսը փետտած, արիւնտուած  
Մայր Արաքսին:  
Եւ մայրական խորին գուժով  
Արաքսն ասաց.  
— Շուտով, շուտով...  
Տարիներ են գալիս - գնում,  
Եւ իր խօսքն է դեռ միշտ կրկնում  
Մայր Արաքսը խուլ որոտով.  
— Շուտով, շուտով...

Ասում են թէ՛ հովը մի օր  
Հարցմունք արաւ կակաչին.  
— Դու ինչո՞ւ ես այդքան կարմիր,  
Այդ ի՞նչ սեւ է քո միջին:

Կակաչն ասաւ. — ուրախ էի,  
Թերթերս էին ըսպիտակ,  
Իողըտջում էր սիրտս սիրով  
Գարնան շուշան ամպի տակ:

Մի վերաւոր եղնիկ անցաւ,  
Արիւնն ընկաւ իմ շրթին,  
Եւ սգաւոր նրա սրտի  
Սեւը մնաց իմ սրտին:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

